16. ՊԻԼՊՈՒԼ ՀԱԶԱՐՈՒ ՀԵՔԻԱԹ

Կէղնի հալվոր մը, ուրեն երեք աղջիկ կէղնի։ Օր մը էդ իրեք աղջիկը պաղչի մեջ նստուկ կէղնին, իրարու կասեն. մեծ աղջիկ կասե.—Եթե թագավորի տղեն զիս առնե, հըմալ հաց պիտի կողեմ, որ ուր ասքրով ուտե, կես լե գետին մնա։

Մեջինեկ աղջիկ լե կասե.— Եթե զիս առնե, հըմալ խալի գործեմ ուրեն, օր ուր ասքրով նստի վրեն, կես լե ծալուկ մնա։

Իսկ հ՝ըմնու պզտիկ կասե.—Եթե զիս առնե, հըմալ ճիժ պիտի բերեմ ուրեն, օր անկն օսկի, ճանկն օսկի էղնի, օսկի պըռջամ վըր գլխուն, օսկի գավազան ձեռք, աղջիկ լե էղնի օսկի քըռկեն է առեջ։

Թագավորի տղեն օր պատըվտուկ էր ծառերու մեջ, զէդոնց ասածնեբը օր լսեց, ելավ զիրեք քուր լե առավ. առջի անգամ մեծ քուրոջ ասաց.— Հ՝ու՞ր է, դու կասեր թագավորի տղեն զիս առնե, հըմալ հաց կողեմ օր ուր ասքրով ուտե, կես լե մնա գետին։

Էնի ասաց.— Իմ հոր տան ռաֆատեն, սեղրն-տախտակ, գրտնակ ու թունտիր հ՝ոդա չէ, օր կողեմ։

Ելավ սուտ. դոր էկավ միջնեկին, հարցուց ասաց.— Հ՝ու՞ր է, դու կասեր թագավորի տղեն օր առնե զիս, հըմալ խալի գործեմ, օր իր ասքրրով նստի վրեն, կես լե ծալուկ մնա։

Էն լե ասաց.— Իմ հոր դազկեն հոս չէ օր գործեմ։

Պզտիկ քուրոջ լե ասաց. «Երբ օր էրկուհոգովցավ ու պառկավ, էն օր կփորձեմ»։ Երբ էրկուհոգովցավ պզտիկ քուր, մեկել քուրվըտիք ասին.— Աղջի, պառկելու օր կէղնիս, չէղնի ուրիշ մարդ կանչես, քու ճիկար մենք ինք, իսկի չէ՞ տերուԹեն կէնենք։

Պառկելու օր էղավ, ձեն տվեց քուրվըտոց, էկան. առաջին անգամ աղջիկ բերեց, «անկն օսկի, ճանկն օսկի, օսկի պըռջամ վըր գլխուն, օսկի քըռկեն առեջ»։ Քուրվըտիք նախանձան ուրանց քուրոջ վրեն, աղջկա տեղ շան լակոտ մը դրին, զաղջիկ վերուցին դրին սնտկի մեջ ու թալեցին ջաղցի առուն. դարձան ուրանց քուրոջ լե ասացին.— Լաո, բերեր բերեր, շան լակո՞տ պիտի բերեր, եթե մենք չէղնեինք հ՝ոդա, ուրիշ էղներ, ի՞նչ կասեր, մենք ի՞նչ ճուհապ իտանք թագավորի տղին։

Գացին ասին թագավորի տղին. թագավորի տղեն զմատեն էնելու տեղ, ասաց.—Ես ի՞նչ էնեմ, իմ ձեռք ի՞նչ կա, աստծու տվածն է, շընչավոր է։

Դառնանք սնտուկին. սնտուկ գնաց ջաղցի վանք, ջաղցպան տեսավ օր ջաղաց կանավ, ելավ ի՞նչ տեսնա. սնտուկ մը էկեր է ասըռվի ջաղցի վանք. բերեց բացեց, տեսավ օր հուրնի-հրեղեն աղջիկ մը կար մեջ, «անկըն օսկի, ճանկն օսկի, օսկի պըռջամ վըր գլխուն, օսկի քըռկեն առեջ». ուրեն էլ ավլատ ու թավլատ չկեր. վերուց տարավ տուն, պահեց, էրեց ուրեն աղջիկ։

Քուրվըտիք մեկ լե ասին ուրանց քուրոջ.— Աղջի, ծամկտրուկ, մեկ լե զմզիկ կանչես, թե օր էրկուհոգովցար։

Մեկ լե էրկուհոգովցավ ու պառկելու էղավ, ձեն տվեց քուրվըտոց, էկան, էդ անգամ տղա էղավ, անկն օսկի, ճանկն օսկի, օսկի պըռջամ վըր գլխուն, օսկի գավազան ձեռքի մեջ. մեկ լե քուրվըտիք կատուի ձագ բերին դրին տղի տեխ, զտղեն վերուցին, դրին սնտկի մեջ, թալեցին ջաղցի առուն, գնաց ջաղցի վանք։ Ջաղցպան տեսավ օր ջաղցի ջուր կտրավ, ելավ դուրս, մեկ լե տեսավ օր սնտուկ մը էկեր է ասըռվի ջաղցի վանք. բացեց՝ մեջ տղե մը, անկն օսկի, ճանկն օսկի, օսկի պըռջամ վըր գլխուն, օսկի գավազան ձեռքի մեջ։ Ջաղցպան զէն լե տարավ ուր տուն, պահեց ու էրեց ուրեն տղա։

Քուրվըտիք վերուցին ասին ուրանց քուրոջ.— Լաո, էդա հըմլա բան կէղնի՞, օր դու կէնիս. մարդ բերե բերե, կատուի ձա՞գ բերե, մենք ի՞նչ ճուհապ իտանք թագավորի տղին, զմզիկ մտցուցիր գետին։

Գացին, ասին թագավորի տղին.— Քու կնիկ կատուի ձագ է բերի։

Բան մը չասաց.— Ի՞նչ էնենք, կարելի է աստված մեր մեղքն է, զարկեր է մեր երես, էն էլ շնչավոր է։

Քուրվըտիք մեկ լե ասին ուրանց քուրոջ.— Սևերես, եթե պառկելու կէղնիս, զմզիկ կանչիս հ՝իգանք, ուրիշ մարդ զքու էպերը չպահե։

Ժամանակ մը վերջ, պզտիկ քուր էրկուհոգովցավ. երբ պառկելու էղավ, ձեն տվեց քուրվըտոց՝ էկան, ըստ հաղ լե տղա էր, անկն օսկի, ճանկն օսկի, օսկի պըռջամ վըր գլխուն, օսկի գավազան ձեռքին մեջ։ Մեկ լե մորքըրտիք բերին սանդ քար, դրին տղի տեղ, զտղեն վերուցին դրին սնտկի մեջ,

հո՞ւր ես քչիկ պլոթ, էկավ ջաղցի առուն, ուր ուրանց քուրոջ դարձան ասին.— Լաո, հըմկա ի՞նչ ճուհապ իտանք թագավորի տղին, առջի անգամ շան լակոտ էղավ, ասինք աստծու տվածն է, անգամ լե կատվի ձագ բերիր՝ մեկ լե ասինք գոռ ու ջանամ, աստծու տվածն է, շնչավոր է, էդրան ի՞նչ ասենք։

Գացին ասին թագավորի տղին, թագավորի տղեն ասաց.— Շան լակոտ ու կատուի ձագ բերեց, ասինք շնչավոր է, բան չկա, ըստ հազ դուք գինաք, ինչ օր պետքն է էրեք։

Քուրվըտիք ասին.— Էտոր պետք է պլուլել խսել, կանգնեցնել դրան Լտե, թակ մը լե դնել կշտի հետ, հ՚ընցնող-դարձող ասե. «Թո՞ւ երես, թակ ի գլուխ» ու վերցու զթակ, զարկե վըր գլխուն։

Հ՚ընցավ ժում ու ժամանակ մը, ջաղցպնի ճժերը ամեն մեկը տաստանհինգ տարեկան էր էղի, կէրթեն կխազեն, կիգեն։ Օր մը լե թագավորի տղեն ավ ու խուշից կիգեր, տեսավ էդ ճժերը. չէ՞ արուն է, սիրտ կեռա, ինչ օր բռներ էր, տվեց ջաղցպանի տղեկներուն, ու ինք դարտակ դարձավ էկավ տուն. շաբաթ մը էրկուս էդ տեսակ, ինչքան օր թագավորի տղեն ռաստ կիգեր ջաղցպանի ճժերուն, ինչ օր ձեռք հ՚ընկներ, կիտեր էնդոնց ու ինք դարտակ կդառներ հ՚իգեր տուն։

Օր մը լե ջուխտակ քուր ասին թագավորի տղին.— Թագավոր ապրած, դու հ՚որին օր կա դարտակ կիգաս տուն, օր լե կա՝ լիք։

— Ձենե պահիմ, աստծուց ի՞նչ պահիմ. էրկու տղա կա, անկն օսկի, ճանկն օսկի, օսկի պըռջամ վըր գլխուն, օսկի գավազան ձեռքի մեջ, ընծիկ օր ռաստ կիգան, հոգիս կքոքռա, ինչ օր սիրտս ճղեն, դնեն մեջ, ինչ օր բռնեմ՝ կիտամ ուրանց ու դարտակ կիդամ տուն։

Քուրվըտիք իրար իշքեցին ու ուրանց մտքի մեջ ասին. «Աստված լե գինա, կա ու չկա մըր քուրոջ ճըժերն է օր թալեցինք ջրի հետ»։ Ելան սորվեցուցին պառավ մը, օր էրթա զէդ տղեկները կորցու։ Պառավ եկավ, գնաց ջաղցպանի տուն, տեսավ օր անկն օսկի, ճանկն օսկի, օսկի պըռջամ վըր գլխուն, օսկի քըռկեն առեջ, աղջիկ մը նստուկ է ու քըռկա կբանի. աղջիկ չէր խոմ, լուսնըկի մը կտոր, խելքը գլխեն գնաց.— Լաո, դու հըմկա հուրնի-հրեղեն, քզիկ կվայելե՞ օր քըռկա էնիս, քզիկ պետք է Պիլպուլ հազարի օր զարկե ու կանչե, դու լե սեր էնիս։

Աղջիկ, ու հում հավկիթ, խելքը պառկավ.— Նանե, Պիլպուլ հազարին ի՞նչ տեղն է, ո՞վ կբերե։

— Լաո, հ՚իրկուն օր էղավ, պառկի տքացի, ասե՝ հիվանդ եմ, քու աղբրտանք օր էկան, հարցուցին թե՝ հ՚որի՞ն իս հիվնդցի, ասա՝ ընծի Պիլպուլ հազարի պետք է, օր զարկե կանչե, թե ոչ, սաղնալիք չկա ընծիկ։

Աղջիկ գրեց զինք սուտ հիվընդութեն ու սազեց տքալ։ Հ՚իրկունք օր աղրբրտանք էկան, հարցուցին թե՝ հ՚որի՞ն իս հիվընդցի, աղջիկն ասաց.—

Պիլպուլ հազարու տարտեն եմ հիվընդցի, էնի չբերեք, օր զարկե ու կանչե, ընծիկ սաղնալ չիկա։

Աղբրտանք լե համոզվան։ Լուսուն օր էղավ, մեծ աղբեր ելավ, փետ առավ ձեռք ու ընկավ ճամբախ, ասաց.— Կէրթամ Պիլպուլ հազարին բերեմ իմ քուրոջ օր սաղնա։

Շատ գնաց, քիչ գնաց, տեսավ օր բաբո մը ճամբու վրեն նստուկ, սպիտակ մուրուքը կգռա գետին ու կծիկ կէնե։ Հարցուց.— Բաբո, ի՞նչ կէնես։

Ասաց.— Լաո, գիշեր ու ցորեկ կկծկեմ. գու զէն մ՝ասի, դու հ՝ուստե՞ն կիգաս։

Ասաց.— Իմ քուր հիվանդ է, Պիլպուլ հազարի կուզե, օր զարկե կանչե, ինք սաղնա։

— Հա՜յ, քու սորվեցնողի վիզը կոտրի. լաո, քու առջև երեք ճամբախ կա, դէտա էրթաս՝ կիգաս, դէտա էրթաս՝ աթուբաթ է, դէտա էրթաս՝ էլ չըս իգա, էլ դու դինաս։

— Բաբո, իգամ-չիգամ, վալլահի, ես էդա ճամբով կէրթամ։ Ու ճամբախ տվեց առջև։

Տղեն քշեց, շատ գնաց քիչ գնաց, ռաստ էկավ քեռշկի մը, օր ոչ երկինք կար ուր նման և ոչ գետին. տեսավ օր ձեն մը կիգեր, հավք զուր թեփուր կթողեր, ինք ուրեն ասաց. «Պիլպուլ հազարին օր կասեն, էղա է» ու սկսավ կանչել.—Պիլպուլ հազարի, կանաչ զընտարի, զաստված օր կսիրես՝ դուն ելի ու արի։

Պիլպուլ հազարին ասաց.—Ջո՜ռ։

Տղեն հար չոքերը դարձավ քար։

Մեկ լե կանչեց.— Պիլպուլ հազարի, կանաչ զընտարի, զաստված օր կսիրես՝ ելի ու արի։ Պիլպուլ հազարին նորեն կանչեց.—Ջո՜ռ։

Տղեն հար սիրտ դարձավ քար։ Անգամ լե օր կանչեց ու Պիլպուլ հազարին ասաց. «Ջո՜ռ», տղեն հար վիզ դարձավ քար, ու օսկի պըռջամ մնաց սրսուկ վըր գլխուն։

Քուրն ու աղբեր իջքեցին օր ուրանց աղբեր չէկավ. պզտի աղբերն ասաց.— Ես իմ աղբոր դյուշման ենք օր ճամբեցի ու չէկավ, աստված դիտող է, ես կէրթամ իմ աղբոր ետև,—ու լուսուն ելավ, ճամբախ տվեց առեջ, շատ գնաց, քիչ գնաց ու ռաստ էկավ հալվորու մը, օր իրեք ճամբու կցվոնք նստուկ էր, ու կծիկ կէներ։

— Բաբո, ի՞նչ կէնես հ՝ոդի,— հարցուց տղեն։

— Լաո, ինչ կէնիմ՝ գիշեր ու ցորեկ կկծկիմ։

— Բաբո, ո՞ր մեկ ճամբով էրթամ։

— Լաո, էդա ճամբով էրթաս՝ կիգաս, էդա ճամբով էրթաս՝ աթուբաթ

է, էդա ճամբով էրթաս՝ չըս իգա. քանի մը օր առաջ քու պես պապա իկիթ տղե մը էկավ էդ ճամբով գնաց ու չդարձավ։

— Ապո, աստված լե հախ՝ ես լե էդ ճամբով կէրթամ,— ու հ՝ընկավ ճամբախ։

Շատ գնաց, քիչ գնաց՝ ռաստ էկավ քեռշկի մը, օր նման նե երկինք կար ու նե դետին։ Պիլպուլ հազարին էլ կզարկեր ու կկանչեր։ Տեսավ օր ուր աղբեր լե էկեր է քեռշկի առեջ ու դարձեր է քար, օսկի պըռչամ սրսրուկ վըր քարին։ «Ես իմ աղբորնե հ՝եվե՞լ իմ», ասաց ինքն ուրեն ու սաղեց կանչեց.— Պիլպուլ հազարի, կանաչ զընտարի, զաստված օր կսիրես՝ Նլի ու արի։

Պիլպուլ հազարին ներսեն կանչեց.—Զո՞ռ։ Տղեն հար չոքերը դարձավ քար։ Մեկ լե կանչեց.— Պիլպուլ հազարի, կանաչ զընտարի, զաստված օր կսիրես՝ ելի ու արի։

Պիլպուլ հազարին մեկ լե ներսեն պոռաց.—Զո՞ռ։

Տղեն չուր ի սիրտ դարձավ քար, օսկի պըռչամ սրսրուկ վըր գլխուն։

Քուր շաբաթ մը լե իշքեց, օր ուր աղբրտանք չէկան, ինքն ուրեն ասաց. «Իմա՞լ իմ ձեռքով քոռցուցի զիմ աչք ու զիմ աղբրտանք տվի դուրս, գացին ու չէկան, աստված լե հախե, ես կելնեմ էրթամ իմ աղբրտոց ետև»։ Լուսուն ելավ, հալալութին առավ ջաղցպնին ու հ՝ընկավ ճամբախ։ Էկավ իրեք ճամբու կցվոնք, տեսավ օր փերի-ֆանա հալվոր մը նստուկ է ու կծիկ կէնե։ Հարցուց.— Պապո, ի՞նչ կէնես դու էդա տեխ։

— Լաո, ինչ կէնիմ, գիշեր ու ցորեկ կկծկեմ։

— Դու զէն մ՝ասի, բաբո, էդա դիով էրկու տղա չընցա՞ն։

— Լաո, էրկու տղա, էրկուքն էլ մեկ պոյ, մեկ ռանկ, էդա ճամբով գացին ու չէկան, ման են քզիկ։

Աղչիկ բարեմնաց էղավ պապոյից ու զճամբախ տվեց առեջ։ Երբ մոտեցավ Պիլպուլ հազարի քեռշկին, տեսավ օր էրկու աղբեր լե դարձեր են քար. պըռչամ սրսրուկ վըր քարին ու ներսեն լե ձեն մը կիգա, միս օսկրին ձեն կիտա. «Իմա՞լ իմ ձեռքով քոռցուցեր իմ զիմ աչք. մակար հըմլա բան կար, հա՜, խոմ ես իմ աղբրտոցմե հ՝եվել չեմ»։ Ու սկսավ կանչել.—Պիլպուլ հազարի, կանաչ զընտարի, զաստված օր կսիրես՝ ելի ու արի։ Պիլպուլ հազարին գիտցավ օր աղչկա ձեն է, լսելու պես ներսեն ու պըրտեն մեկ մը կանչեց.— Ջա՞ն։

Աղչիկ մեկ լե կանչեց.— Պիլպուլ հազարի, կանաչ զընտարի, զաստըված օր կսիրես՝ ելի ու արի։

— Ջա՞ն,— պոռաց ներսեն Պիլպուլ հազարին։

Անգամ մը լե օր կանչեց, բացեց զդռները, էկավ, աղչիկ ասաց.—

Մեռնիմ քզիկ, Պիլպուլ հազարի, դու էդի ի՞նչ օղլաթ իս հանի իմ աղբրտոց գլուխ։

Պիլպուլ հազարին աղչկա սիրուն կանաչ վարոցով մեկ էն աղբոր, մեկ էն աղբոր զարկեց, էրկուս լե ճմլտկացին, ելան.—Օխեշ, ինչքան ենք քնի։

— Մեռնիմ ձըր գլխուն ու արևուն,— քուրն ասաց աղբրտոց,—ի՞նչ քուն էր, դուք քար եք դարձի։

Վերուցին զՊիլպուլ հազարին, բաոցան ըզՊիլպուլ հազարու մալ ու թամալ, էկան ջաղցրպանի դուռ իջան, ու ջաղցպան ուրախցավ, էղավ աշխարքի մալ ու թամալի տեր, զջաղցպանութենի թարկ տվեց։

Ընցավ ժում ու ժամանակ մը, Պիլպուլ հազարին ու էրկու աղբերը գացին սարեր նեճրութենի, ռաստ էկան թագավորի տղին։ Թագավորի տղեն է՝ ինչ օր բռնեց, տվեց էրկու աղբոր ու Պիլպուլ հազարուն։ Երբ օր թագավորի տղեն տղեկներու խիչեն քաշվավ գնաց, Պիլպուլ հազարին վերուց տղեկներուն ասաց.—Գինա՞ք, էդի ձըր պապն է։

Ու գլխեն՝ ուրանց ու ուրանց մոր գլխու զալածը պատմեց։

Թագավորի տղեն մեկ լե դարտակ դարձավ էկավ տուն. կնկտիք երբ տեսան թագավորի տղեն բան մը չբերեր է ուր հետ, հ՚ընկան գլխու ու հարցուցին.— Թագավոր ապրած, էսօր հ՚որի՞ն իս դարտակ էկի տուն։

— Քենե պահեմ, աստծուց ի՞նչ պահեմ, էն էրկու տղեն օր էրկու ամիս է չերևեն, ռաստ էկան ընծի, ինչ օր բռնի՝ տվի ուրանց։

Վերուցին կնկտիք ասին.— Թագավոր ապրած, օր հըմալ է՝ դու զէդ տղեկները շատ կուզես, չը՞ս կրնա տավաթ էնի, բերի մըր տուն։

— Հ՚որի՞ չըմ կրնա, դուք թատարուք տեսեք, բերել ըռհաթ է։

Օլոր օր նորեն ռաստ էկան թագավորի տղին, թագավորի տղեն ասաց Պիլպուլ հազարուն ու տղեկներուն.— Վաղ մըր տուն տավաթի էկեք։

Ասին.—Հա՛, կիգանք։

Հ՚իրկուն երբ օր դարձան էկան տուն, Պիլպուլ հազարին տղեկներուն ասաց.— Գինա՞ք թագավորի տղեն զձզիկ հ՚որի՞ն է կանչի տավաթ. ձըր մորքրտիքն են տվեր կանչել տավաթ օր կորցուն զձզիկ. հանտե կէրթանք հ՚ոնի, իմ շուն ուր վըր քելեց, դուք լե ընդոր ետևեն կէրթաք. դռան առչև գազկան հոր մը փորած են, օր փրցնիք հ՚ընկնիք հ՚ինք ու չելնիք, իմ շուն էնդոր պրոկրներով կէրթա, դուք կէրթաք ետևեն. կէրթաք դռան ետև. հ՚ոնի կնիկ մը կա փաթվուկ խսել, կանուկ. ձըր ծնող մերն է. ձըր մորքրտիք կասեն. «Թու երես, թակն ի գլուխ»։ Դուք կասեք. «Ի՞նչ հախ ունինք մըր ծնող մոր ասենք՝ թու երես, թակ ի գլուխ»։ Մեկդ կվերցու թակ կթալ, մեկդ՝ զխսել, ձըր քուր լե կբռնե զձեռք, կբերե նստցու, հանդե ձզիկ խահվա, հաց կբերեն, քանի օր իմ շունս չկերեր է, դուք չուտիք՝ դեղուկ է։

Լուսուն երբոր ելան, գացին թագավորի տղի տուն, Պիլպուլ հազարին՝ ու շաղցպանի ճժերը, մորքրտիք դռան ետև կանուկ են, վերուցին ասին.—Թու երես, թակն ի գլուխ։ Մեծ տղեն ասաց.— Ի՞նչ հախ ունեմ իմ ծնող մոր ասեմ՝ թու երես, թակն ի գլուխ։ Վերուց զթակ, թալեց։ Ընդ-տիկ տղեն լե էկավ, էն լե էն տեսակ ասեց, զխսել վերուց թալեց, աղջիկ օր էկավ, բռնեց զմոր ձեռք, բերեց նստցուց։

Բերին խահվա, հաց, թագավորի տղեն ինչ էրեց՝ մարդ չմոտեցավ սեղանին, ասին Պիլպուլ հազարուն.— Քու շան տուր, թըղ ուտե օր մենք լե ուտենք։

Պիլպուլ հազարին ասաց.— Իմ շուն դեղուկ հաց չուտե։

Կանչին դրսեն ուրիշ շուն մը, տվին՝ օր ուտե. զբերան չըր զարկի սեղան, շուն էղավ հազար կտոր։ Պիլպուլ հազարին ասաց.—Ձասի՞ դե-ղուկ է էդա հաց։

Նոր մեկ-մեկ պատմեց Պիլպուլ հազարին թագավորի տղեկներու ու ուրանց մոր գլխու գաղածները։

— Հըմկա լե,— ասաց,— դռան առջև հոր մը փորած են օր քու տղեկները հ՝ընկնեն հորու մեջ ու չելնեն։

Տարավ ցուցուց։ Թագավորի տղեն բերել տվեց էրկու քահելան ձի, գէրկու քուր կապեց ձիաններու պոչերը ու ասաց.— Ձձզիկ տեսնամ, սար կզարկեք, ձոր կզարկեք, անատակ ծովերու մեջ զձըր պոչերը կցողվեք, կիգաք դուռ կանիք։

Նոր թագավորի աղջիկն ու Պիլպուլ հազարին հասան ուրանց մուրա-տին ու տղեկները գացին էղան ուրանց հոր տղա։

Աստծուց իշավ իրեք խնձոր. մեկ ասողին, մեկ լսողին, մեկ անկաճ էնողին։